

խաղահ Պրոպագանդայի Ս. Մխարանութեան (14), եւ այլ քրիստոնեայ իշխանս, պատմելով ընդարձակօրէն ինչ որ կը պարտէր Հ. Փիսքոփոյի եւ ասպետ Պետրիկի նախանձայուղութեան» (15) :

Հոս դիտելի է որ տեղեկագիրը սխալմամբ կարծել կու տայ՝ թէ Յակոբ կաթողիկոս նոր կ'ընդունէր կաթողիկէ դաւանանքը. վերեւ տեսանք որ ան բաղմամբիւ նամակներով յաճախ յայտնած էր արդէն իր հաւատակցութիւնը Հռոմի Ս. Աթոռին հետ :

Հայրապետին այս հրապարակային հաւատոյ դաւանանքէն ետք, Հ. Փիսքոփոյ եւ Պետրիկ վարդապետ, իրենց կանխայայտ խոստումին համաձայն, Աւստրիա կ'երթան աշխատելու նպատակաւ ի նպաստ հայ դատին, մինչ ուրիշներ կը դործեն Փրանսական Արքունիքին մօտ յօդուտ Արեւելքի :

Աւստրիոյ Լէոպոլտ Ա. Կայսրէն ընդունած առաջին ունկնդրութեան ընթացքին, Հ. Փիսքոփոյ անոր կը բացատրէ Հայաստանի Քրիստոնէութեան վիճակը, կը ներկայացնէ Յակոբ Կաթողիկոսին նամակները : Կը տեսակցի նաեւ Մայր-Կայսրուհիին եւ Գահակալ Կայսրուհիին հետ : Հայաստանի մէջ Կաթողիկէութեան ծաւալումին համար օգտակար կը դատուի որ Հ. Փիսքոփոյ Հռոմ երթայ, իսկ Պետրիկ վարդապետ Վիեն-

(14) Սրբազան Ժողովին :

(15) Լեո, Անդ 345 :